ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 261
վարչական տուգանք նշանակելու մասին

29 հունիսի 2018թ. քաղաք Երևան

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետ Գեորգի Ավետիսյանս, քննելով «ԳՈՌ-97» ՍՊԸ տնօրեն Գոռ Չիչոյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթի վերաբերյալ գործը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝

ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի 2017 թվականի մայիսի 23-ի N 241-17 հանձնարարագրի համաձայն՝ «ԳՈՌ-97» ՍՊԸ-ում իրականացված ստուգման արդյունքում պարզվել և 2017 թվականի հունիսի 26-ի թիվ 241-17 վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությամբ արձանագրվել է այն փաստը, որ տնտեսավարող սուբյեկտի կողմից խախտվել են **«Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի և ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 20-ի N 34-Ն որոշման հավելվածի 25-րդ կետի** պահանջը. այն է՝

- հայտնաբերվեց «Զառ ընդ Գար Ալկո» ՍՊԸ-ի արտադրության մեկ շիշ հայկական կոնյակ, որի պիտակը չուներ ՀՀ օրենսդրությամբ պահանջվող մակնշում՝ ըստ սահմանված ձևի և բովանդակության (բացակայում էր ՀԱՏ կամ EAC նշանը).
- սանհանգույցն ապահովված չէր էլեկտրաչորացուցիչներով և (կամ) սրբիչով:

Այսպիսով, հաստատվել է, որ սույն վարչական գործով առաջացած իրավախախտման համար պատասխանատու է «ԳՈՌ-97» ՍՊԸ տնօրեն Գոռ Չիչոյանը (հասցե՝ ք.Երևան, Սայթ-Նովա փ., շ.8, բն.1): Գոռ Չիչոյանը վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամի մասին պատշաճ կարգով ծանուցվել է, սակայն գործի քննությանը չի ներկայացել և միջնորդություն չի ներկայացրել գործի քննությունը հետաձգելու մասին:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով **Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 14-րդ, 35-րդ, 238²-րդ, 279-րդ, 281-րդ հոդվածներով՝ 158-րդ հոդվածի 2-րդ և 6-րդ մասերով՝**

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. «ԳՈՌ-97» ՍՊԸ տնօրեն Գոռ Չիչոյանի նկատմամբ նշանակել տուգանք սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով՝ 50.000 (հիսուն հազար) ՀՀ դրամ:

2. Տուգանքը վճարել թիվ 900005242822 գանձապետական հաշվին, **Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 305-րդ հոդվածի** համաձայն՝ որոշումն ստանալու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում, իսկ որոշումը գանգատարկելու

կամ բողոքարկելու դեպքում՝ գանգատը կամ բողոքն առանց բավարարման թողնելու մասին ծանուցման օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում: Տուգանքի վճարումն ապացուցող բանկային անդորրագրի պատճենը սեղմ ժամկետում ներկայացնել ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության աշխատակազմի իրավաբանական վարչություն:

3. Տուգանք նշանակելու մասին որոշման հարկադիր կատարումը իրականացվում է՝ համաձայն **«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի**:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կամ դատական կարգով **«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով** սահմանված ժամկետում (երկու ամսվա ընթացքում):

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 7/2/2018 18:05:17 GMT+4

Signed by: AVETISYAN GEORGI 2312770121

Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Կ.Տ.